# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնք
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մրգաստան 3/15, Հեռ. 0231-6-38-10, 094 80 53 63, mrgastan.armavir@mta.gov.am

N 65
*18 մայիս 2020թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Օրենքով սահմանված կարգով Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2020թվականի ապրիլ ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և որոշումները

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղարիբյան*
*023163810*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» ապրիլի 2020թվական թիվ 9

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետությունում «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման համար, կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով, միջոցառումների պատասխանատու նշանակել՝ համայնքի ղեկավարին:
2.Ապահովել՝ անհրաժեշտ նյութերով և դիմակներով աշխատակիցներին:
3.Կատարել՝ Պարետի հանձնարարականներն և որոշումներն, ապահովելով գրասենյակային տարածքի կազմակերպման կանոնները:
4.Կատարել՝ ախտահանիչ միջոցառումներ համայնքի տարածքում և համայնքապետարանում:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական ապրիլի 16
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» ապրիլի 2020թվական թիվ 10

ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՍԵՓԽԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 109-ի 1-ին մասի 2-րդ կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Լուծել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի սեզոնային աշխատանքներ իրականացնող բանվոր Քրիստինե Վաղարշակի Սեփխանյանի հետ կնքած «ժամկետային աշխատանքային» թիվ 5 պայմանագիրը, 1-ը ապրիլի 2020թվականից:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական ապրիլի 1
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«30» ապրիլի 2020թվական թիվ 11

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՆՅՈՒԹԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հոդված 38-ի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքում «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման համար, կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով, ձեռք բերել՝ անհրաժեշտ ախտահանիչ նյութեր, ձեռնոցներ և դիմակներ:
2.Այդ նպատակով ստեղծված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնող հանձնաժողովին, հանձնարարել՝ ձեռք բերել անհրաժեշտ պարագաները, որի համար հատկացնել՝ 40 000 /քառասուն հազար/ դրամ:
3.Հանձնաժողովի նախագահին՝ ձեռք բերել անհրաժեշտ պարագաները և զեկուցել համայնքի ղեկավարին:
4.Հաշվապահին կատարել վճարում՝ օրենքով սահմանված կարգով:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական ապրիլի 30
Մրգաստան համայնք